ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«22» փետրվարի 2018 թվականի №.....21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի № 02-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի հունվարի 16-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» № 02-Ա հրամանում կատարել հետևյալ լրացումները.

1) վերնագրում «ստեղծելու» բառից հետո լրացնել «և պատասխանատու ստորաբաժանումների ցանկը հաստատելու» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակության 2.1 կետով՝

«2.1 Հաստատել Կարգով նախատեսված միջոցառումների և դրանց իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումների ցանկը՝ համաձայն 2-րդ հավելվածի:»:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 2
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարի
2018թ. փետրվարի «22»-ի
N 21-Ա հրամանի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

NN	Միջոցառման անվանումը՝ ըստ ՀՀ կառավարության 21.12.2017թ. № 1721-Ն որոշման հավելվածի	Պատասխանատու ստորաբաժանման կամ մարմնի անվանումը
1.	6-րդ կետով նախատեսված՝ կազմակերպությունների ընտրության գործընթացը սկսելու վերաբերյալ հայտարարության հրապարակում	Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
2.	20-րդ կետով նախատեսված՝ ընտրված կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում	
3.	7-րդ կետով սահմանված դիմումների և դրանց կից ներկայացված փաստաթղթերի տրամադրում ընտրող հանձնաժողովի անդամներին	Իրավաբանական վարչություն
4.	10-րդ կետով նախատեսված՝ կազմակերպության ընտրության կամ ընտրության մերժման վերաբերյալ հրամանի նախագծի մշակում և սահմանված կարգի համաձայն շրջանառում	
5.	21-րդ կետով նախատեսված էլեկտրոնային մատյանի վարում	
6.	9-րդ, 10-րդ և 11-րդ կետերի համաձայն կազմակերպությունների ընտրության գործընթացի կազմակերպում	Ընտրող հանձնաժողով
7.	13-րդ, 14-րդ և 22.4-րդ կետերի համաձայն կազմակերպություններին գումարների տրամադրում	Հաշվապահական հաշվառման բաժին
8.	16-րդ կետով նախատեսված՝ գումարի օգտագործման վերաբերյալ կազմակերպություններից ստացված հաշվետվությունների վերլուծություն և տրամադրված գումարը 15-րդ կետի համաձայն օգտագործման արձանագրում	Իրավաբանական վարչություն, Հաշվապահական հաշվառման բաժին
9.	17-րդ կետով նախատեսված՝ կազմակերպությունների ընտրությունը չեղյալ համարելու և գումարի տրամադրումը դադարեցնելու վերաբերյալ հրամանի նախագծի մշակում և սահմանված կարգի համաձայն շրջանառում	
10.	17-րդ կետի համաձայն կազմակերպությունների ընտրությունը չեղյալ համալերու և գումարի տրամադրումը դադարեցվելու դեպքում 18-րդ և 19-րդ կետերով նախատեսված միջոցառումների իրականացման ապահովում	